ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 731 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 110-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի փետրվարի 10-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնների ընդլայնում» ծրագրի մասին» N 110-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ատլասյան» ընկերության հետ (Atlassian Pty Ltd, Սիդնեյ, Ավստրալիա) 2026 թվականի հոկտեմբերի 16-ի հաշիվ-ապրանքագրով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է 2026 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև 2027 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում համակարգչային ծրագրի արտոնագրի բաժանորդագրության ձեռքբերում՝ 2,895.65 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Պրեմիում սթոուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01336488) 2026 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացավարի պողիումի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 458,340 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱջայլԲիթս» ընկերության հետ (AgileBits Inc. dba 1Password, Տորոնտո, Կանադա) 2026 թվականի սեպտեմբերի 27-ի հաշիվ-ապրանքագրով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է 2026 թվականի հոկտեմբերի 27-ից մինչև 2028 թվականի հունվարի 15-ն ընկած ժամանակահատվածում համակարգչային ծրագրերի արտոնագրերի բաժանորդագրության ձեռքբերում՝ 16,685.55 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

11.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ